ՄԻ ԴՐՎԱԳ 14-15-ՐԴ ԴԴ. ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Լիլիթ Մելիքյան

Մուտք

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն հոդվածը նվիրված է XIV-XVI դդ. ընթացքում Վրաստանում Հայ Առաքելական Եկեղեցու թեմի կարգավիճակի և դերի լուսաբանմանը: Վրաստանում հայոց թեմը, կազմելով հայ գաղթօջախի հոգևոր և քաղաքական կյանքի անքակտելի մասը, դարձել էր վրաստանաբնակ հայերի և Սբ. Էջմիածնի հետ կապող կարևորագույն կառույց: Մեր խնդիրն է պարզել XIV-XVI դդ. ընթացքում մինչ այժմ հանրությանը անհայտ թեմական առաջնորդներին և նրանց օրոք թեմի կարգավիճակը: Հետազոտությունն ընգրկում է նաև Սբ. Էջմիածնի, վրաց թագավորների և Վրաստանում հայկական թեմի փոխհարաբերությունների վերլուծությունը: Փորձ է արվում ճշգրտել Վրաստանում հայոց թեմի սահմաններում ընդգրկված վիճակները և դրանց պատկանելության հետ առնչվող հարցերը:

Վրաստանում հայկական թեմի նորահայտ առաջնորդները և թեմի կարգավիճակը 14-15 րդ. դդ.

Ըստ հրապարակում եղած գավազանագրքի՝ Վրաստանում հայ առաքելական թեմի առաջնորդների շարքը ընդհատվում է 1284 թ. և վերսկսվում միայն 1443 թ.[1]:

Այս առումով արժեքավոր տեղեկություն է վկայված 1432 թ. ձեռագիր հիշատակարանում՝ գրված Հարանց վանքում[2]:

«Շնորհիւ Տեառն սկսա(յ) և ողորմութեամբ Տեառն Աստուծոյ կատարեցի ի ՊՁԱ թվականիս Հայոց (1432), յԱւգոստոս ամսոյ ի ԺԶ (16): Գրեցաւ ձեռամբ սուտանուն աբեղայի Կարապետի ի մայրաքաղաքս Տփղիս, ի վանքս պարոն Սալաղենց, ի դրան Սուրբ Ամենափրկչիս, զոր Տէր

---

[1] «Գավազանագիրք Վրաստանի հայոց թեմի», տե՛ս https://bit.ly/3xR5tQo, (6/7/2022):

[2] Վանքի մասին տե՛ս **Մուրադյան Պ.,** Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, Ս. Էջմիածին, 2009, էջ 85:

Աստուած զանձեռագործ խորանն պարգևեսցէ զերկնից արքայութիւնն՝ շինողաց սուրբ ուխտիս, ամէն:

Եւ ես մեղսամած գրիչ աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զիս և զծնաւղսն մեր՝ զՊետրոս քահանայ և զՇինորհուոր, և զեղբայրն իմ զ-Յովհանէս, և զքեռն իմ զՍուլտան՝ զհանգուցեալն ի Քրիստոս, որ ի միւս եղբայրս, որ աւգնական եղև ի կոկել թղթիս...:

Եղբարք, խոշորութեան գրիս և սղալանացս անմեղադիր լերուք, զի կարն մեր այդ չափդ էր:

Յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս պարոն Չալաբէն, և ետ Խ (40) աւուր փոխեցաւ ի Քրիստոս արհիեպիսկոպոսն տէր Յովանէս՝ եղբայր նորին, որդիք պարոն Փաշի, երիտասարդական մահուամբ, թողին սուք անբժշկելի իւրոցն և աւտարաց: Զոր Տէր Աստուած թողցէ զամենայն սխալանս նոցա ի յաւուր դատաստանին, ամէն»[1]:

Վերոնշյալ հիշատակությունից ստացվում է, որ Հարանց վանքը մինչև 1432 թ. գործել է արքեպիսկոպոս Հովհաննեսի առաջնորդությամբ: Նա մեծահարուստ Փաշայի որդին էր, ում անվան հետ է կապվում նաև Հարանց վանքի կառուցումը[2]: Նկատենք, որ հայոց եկեղեցում արքեպիսկոպոս տիտղոսը՝ մեծ եպիսկոպոս (ավագ եպիսկոպոս), շնորհում է կաթողիկոսը՝ ի գնահատումն եպիսկոպոսի ծառայությունների: Հետևաբար, կարելի է համարել, որ Հովհաննես արքեպիսկոպոսը մինչև 1432 թ. (մինչև մահը) եղել է Վրաստանի հայկական թեմի առաջնորդ:

1441 թ. Հայոց եկեղեցու կյանքում տեղի է ունենում կարևորագույն իրադարձություն. որոշում է կայացվում հայոց կաթողիկոսական աթոռը հաստատել իր նախնական վայրում՝ Վաղարշապատում, Սուրբ Էջմիածնի վանքում[3]: Կաթողիկոսական աթոռը տեղափոխելուց հետո անրաժեշտություն է առաջանում կենտրոնացնելու բոլոր թեմերի կառավարումը, այդ թվում նաև Վրաստանում գործող հայկական թեմինը: Գրիգոր Թ Մուսաբեկյանց կաթողիկոսից (1439-1441) հետո կաթողիկոսական աթոռը զբաղեցնելու համար պայքար են սկսում մի շարք նշանավոր

---

[1] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մաս Ա, Կազմեց **Լ. Ս. Խաչիկյան,** Երեւան, 1955, էջ 420-421:

[2] **Մուրադյան Պ.,** Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, էջ 88:

[3] **Օրմանյան Մ.,** Ազգապատում, հտ Բ, Ս. Էջմիածին, 2001, սյուն 310-316:

եպիսկոպոսներ, այդ թվում՝ Հյուսիսային եպիսկոպոսներից Զաքարիա Հավուցթառեցին, Հովհաննես Հերմոնացին, Գրիգոր Արտազեցին, Վասպուրականի Աթոռից՝ Զաքարիա Աղթամարացին: Վասպուրականի թեկնածուի միջոցով Հայոց Եկեղեցին նպատակ էր դրել վերացնել Աղթամարի բաժանումն ու Վասպուրական նահանգի և կենտրոնական Հայաստանի եկեղեցական կառույցները վերամիավորել Ամենայն Հայոց Կաթողիկոսության մեջ[1]: Սա առաջացնում է Սյունյաց թեմի դժգոհությունը, իսկ վերջինս կաթողիկոսական աթոռի Սիս քաղաքում գտնվելու ժամանակ ուներ մետրոպոլիտության կարգավիճակ: Այս առումով Մաղաքիա Օրմանյանը նկատում է. «...շատ գործերու գլուխ Վասպուրականցիներ անցան ահա եւ օգուտ անոնց բաժին սկսաւ ըլլալ, եւ Սիւնեցիներ եւ Տաթեւական խումբը երկրորդական շարքը մղուեցան, մինչեւ իրենք էին Արեւելեայց կեդրոնը, իրենք էին որ նոյնիսկ Վասպուրականցիներուն շարժում էին տուեր...»[2]:

Չնայած Սյունյաց եպիսկոպոսարանի ըմբոստություններին՝ Թովմա Մեծոփեցու հաղորդմամբ. «Եւ հրաման եղև ի բռնաւորէն [Երևանի կառավարիչ Յաղուբ բեկը – Մ. Օրմանեան.] օրհնել կաթուղիկոս առանց հակառակութեան...»[3]: 1441 թ. կաթողիկոս է ձեռնադրվում Կիրակոսը (1441-1443), ով ծնունդով Վասպուրականից էր: 1443 թ. Սյունյաց թեմի և Տաթևի աշակերտների գլխավորությամբ Կիրակոս կաթողիկոսի դեմ տեղի է ունենում ըմբոստացում[4]: Համաձայն Թովմա Մեծոփեցու տեղեկության՝ այդ շարժումը գլխավորում էր Վրաստանում հայկական թեմի առաջնորդ Մարկոս եպիսկոպոսը. «...այսպէս վարդապետ և եպիսկոպոս ոմն Մարկոս անուն յաշակերտաց վարդապետին Յովհաննու, որ գնացեալ էր ի կողմն Վրաց և ոչ հանդիպեցաւ ի ձեռնադրութիւն սուրբ հայրապետին և եկեալ յետոյ ետես զարդարեալ զսուրբ Կաթողիկէն...»[5]: Ակնհայտ է, որ Մարկոս եպիսկոպոսը եղել է Հովհաննես Հերմոնացու

---

[1] **Հովհաննիսյան Ա.,** Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում, Երևան, 2020, էջ 179-180:

[2] **Օրմանյան Մ.,** նշվ.աշխ., էջ 324:

[3] **Թովմա Մեծոփեցու** յիշատակարանը, Հրատ. Կ. Կոստանեանց, Թիֆլիզ, 1892, էջ 69:

[4] **Օրմանյան Մ.,** նշվ. աշխ., սյուն 326-327:

[5] **Թովմա Մեծոփեցի,** էջ 76-77:

(1370-1440-ական թթ.)[1] աշակերտը և, ամենայն հավանականությամբ, եպիսկոպոս կարգվելուց հետո անցել է Վրաստան:

Ընդհանուր առմամբ կարելի է պնդել, որ քննարկվող ժամանակաշրջանում Վրաստանում հայոց թեմը գործում էր Սյունիքի թեմի գերագահության ներքո: Այս մասին է փաստում այն, որ Վրաստանի հայկական թեմում առաջնորդը նշանակվել էր հենց Սյունյաց արքեպիսկոպոսարանի վարդապետներից մեկը՝ Մարկոսը: Մյուս կողմից Մարկոս եպիսկոպոսի կողմից շարժումը ղեկավարելու ձգտումը խոսում է Վրաստանում հայկական թեմի ազդեցիկ դիրքի, միաժամանակ Սյունյաց արքեպիսկոպոսարանի կարգավիճակը պահպանելու մասին:

Այս պայքարի արդյունքում վճռվում է Կիրակոսի գահընկեցությունը, և կաթողիկոս է ձեռնադրվում Գրիգոր Արտազեցին (1443-1465 թթ.)[2]: Քննարկվող և Գրիգոր կաթողիկոսին հաջորդող ժամանակաշրջանում Վրաստանում հայկական թեմի կարգավիճակի մասին որոշակի պատկերացում կազմելու համար անգնահատելի են 1452 թ., 1463 թ., 1469 թ., 1474 թ. գրված ձեռագիր հիշատակարանները: Դրանցից երկուսը՝ 1452 թ. և 1463 թ. գրվել են մայրաքաղաք Տփղիսում՝ Սբ. Գևորգ եկեղեցում: 1452 թ. ձեռագրից իմանում ենք, որ այն գրվել է «...ի հայրապետութեան տեառն Գրիգորի՝ Վաղարշապատու պատրիարգի, եւ ի վերադիտողութեան նահանգիս Վրաց Տէր Ղուկասու՝ Հաղբատայ արքեպիսկոպոսի, եւ ի թագաւորութեան Վրաց Գէորգեայ Բագրատունոյ...» օրոք[3]: Մյուսը՝ գրված 1463 թվականին, հայտնում է. «...ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, եւ ի վերատեսչութեան տեղոյս [Վրաստանի – Լ. Մ.] տէր Ղուկաս արհեպիսկոպոս Հաղբատայ...»[4]: 1469 թ. Գրիգոր գրչի կողմից Գորիի Սբ. Աստվածածին եկեղեցում գրված ձեռագիր հիշատակարանում Գորիում գործող մի խումբ տեղացի քահանաների կողքին հիշատակում է նաև Հաղբատի հոգևորականներին: Ավելին Գրիգորը հայտնում է, որ եղել է Հաղբատում, ուր «զտէր Ղուկաս արքեպիսկոպոս Հաղբատու, որ բազում սիրով ընկաւ զմեզ ի յարկս իւր և մխիթարեր

---

[1] Տաթևի դպրոցի ուսուցչապետ և վարդապետ, տե՛ս Մ. Օրմանյան, նշվ. աշխ., սյուն 315:

[2] **Օրմանյան Մ.,** նշվ. աշխ., սյուն 328:

[3] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 17-18:

[4] Նույն տեղում, էջ 222-223:

զմեզ առատապէս»[1]: Վերը նշյալ հիշատակությունը կարող է վկայել, որ Գորին իր վիճակով գտնվում էր Հաղբատի թեմի իրավասության տակ, ինչը ավելի ակնհայտ ներկայացված է հետագա դարերի ձեռագիր հիշատակարաններում և կաթողիկոսական կոնդակներում: 1474 թ. Տփղիսում՝ Սբ. Գևորգ եկեղեցու գրչօջախում գրված ձեռագիր հիշատակարանում Ղուկասը վկայված է հետևյալ ձևով. «(ի)արհիեպիս-կոպոսութեան **մերոյ** տէր Ղուկասի, որ յայսմ ամի շինեաց զանգակա-տուն բարձր և խաչ ի գլուխ նորա...»[2]: Ղուկաս արքեպիսկոպոսը վերջին անգամ հիշատակվում է 1475 թ. Հաղբատի Սբ. Նշան եկեղեցում պահպանված արձանագրությունում[3]: Հարկ ենք համարում նշել, որ Հ. Ոսկյանը 1455 թվականը համարում է Ղուկաս արքեպիսկոպոսի մահվան տարեթիվ[4], ինչը, իհարկե, անհնար է դառնում, երբ ի մի են բերվում Ղուկաս արքեպիսկոպոսի վերաբերյալ վերոնշյալ հիշատակությունները:

Այսպես, ձեռագրերում հիշատակվող «վերատեսուչ» կամ «վերադի-տող» բառերի տառացի թարգմանությունը հունարենից episkopos է (եպիսկոպոս), ով վերահսկում էր թեմի եկեղեցական գործերը[5]: Վերո-նշյալ ձեռագիր հիշատակարանները փաստում են, որ Վրաստանում հայկական թեմի առաջնորդ Ղուկասը միաժամանակ եղել է Հաղբատի արքեպիսկոպոս:

Հարկ է նշել, որ դեռևս XII-XIV-րդ դարերի ընթացքում Վրաստանում հայ առաքելական թեմի առաջնորդները միաժամանակ Հաղբատի թեմի եպիսկոպոսներն էին[6]: Այս ամենից կարելի է ենթադրել, որ Հաղբատի թեմը և առաջնորդը ունեցել են առանձին բարձր աստիճան, իսկ Վրաս-տանում հայկական թեմը գործում էր Հաղբատի թեմի առաջնորդության և տեսչության ներքո:

---

1 «Ցուցակ հայերեն ձեռագրաց մասնավոր անձանց», 1980, Բանբեր Մատենադարանի, N 13, Երևան, էջ 317-318:

2 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 361-362:

3 **Ղաֆադարյան Կ.,** Հաղբատ, Երևան, 1957, էջ 163:

4 **Ոսկյան Հ.,** Գուգարքի վանքերը, Վիեննա, 1960, էջ 237:

5 **Մալխասյանց Ս.,** Հայերէն բացատրական բառարան, Երևան, 1945, էջ 327:

6 **Մելիքյան Լ.,** Հայոց եկեղեցին և հայերը Վրաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում(X-XIII դդ.), Հայագիտության հարցեր 3(24,)Երևան, 2021, էջ 37-49:

Բարսեղ կաթողիկոսի օրինության գիրը և թեմապատկան վիճակը

Վրաստանում հայկական թեմի հետագա կարգավիճակի, թեմական սահմանների և եկամուտների լուսաբանման տեսանկյունից առանձնահատուկ ուշադրության են արժանի Գրիգոր կաթողիկոսի (1445-1465) և «Բարսեղ կաթողիկոսի» անունը կրող կոնդակները:

Գրիգոր կաթողիկոսի կոնդակից պարզվում է, որ Սանահինի եպիսկոպոսական աթոռին են պատկանել «Աւրհնութեամբ ծանիք Կլտիկարայ (Կլդեկարի)[1] երկրի գեղորէից, Ախալքալաքայ եւ Թրիալեթու ժողովուրդ, Բարէթու[2] (rep. Բարալէթու-Պ.Մ.) եւ Կարծրաձախ[3] (resp. Կարծախու) ժողովուրդք, զձեզ ամէն շնորհեցաք եւ տվաք Սանահնու Սուրբ Աստուածածնին թէմ եւ վիճակ»[4]: Այսինքն, Ջավախքի, Կդեկարիի, Թռեղքի հայաբնակ գյուղերի և ավանների վիճակը պատկանել է Սանահինի վանքին:

Առանձին հետաքրքրություն է առաջացնում «Բարսեղ կաթողիկոսի» անունը կրող կոնդակը. «Ի Տէր Բարսեղ. Կաթողիկոսէ հայոց եւ պատրիարք Վաղարշապատու Սուրբ Աթոռուս Էջմիածնայ հասցէ գիր աւրհնութեան եւ պահպանութեան եւ առաքելական աւրհնութիւն ի վերայ մայրաքաղաքին Տըփխիսու եւ Փաշիվանիցն. և իւր բոլոր թէմին գեղանուն, որ է տէրունի սուրբ Էջմիածնայ՝ Կումիսու եւ Վաշլէվանու, Դապախմելիքու, եւ Դուղամու եւ Վարտայսուպան, եւ Կիկէթու եւ Տագնա գեղու, Լիսու, Թէլէթու եւ Փաշիվանից թէմին քահանայիցն եւ ժողովրդեան մեծի եւ փոքու առ հասարակ ամենեցուն. ամէն:...

Եւ ընդ աւրհնութիւնս ծանուցումն լինի ձեզ՝ Փաշիվանից քահանայք եւ ժողովուրդք եւ բոլոր գեղանուն վիճակին: Դուք Էջմիածնայ տէրունի

---

[1] Կլդեկարին գտնվում է Թեթրի Ծղարոյի շրջանում՝ Ալգեթի հովտի վերին մասում՝ Կլեդեկարի ամրոցի տարածքում: Տե՛ս *ქართლის ცხოვრების* ტოპონარქეოლოგიური ლექსიკონი, გ. გამყრელიძე, დ. მინდორაშვილი, ზ. ბრაგვაძე, მ. კვაჭაძე და სხვ., თბ, 2013, გვ 296.

[2] Բարալեթ քաղաքը գտնվում է Ախալքալակի շրջանում, Ախալքալակից 16 կլ. հեռավորության վրա: Տե՛ս *ქართლის ცხოვრების* ტოპონარქეოლოგიური ლექსიკონი, նշվ.աշխ., էջ 93:

[3] Կարծախի գյուղը գտնվում է Ախալքալակի շրջանում: Տե՛ս *ქართლის ცხოვრების* ტოპონარქეოლოგიური ლექსიკონი, նշվ.աշխ., էջ 283:

[4] **Մուրադյան Պ.,** «Քյոթուկ», էջ 81:

էիք, զձեզ տվի և շնորհեցի թէմ եւ վիճակ Սանահնու Սբ. Աստվածածնին, եւ Տէր Բարսեղ եպիսկոպոսն ձեզ վերայդէտ եւ հովիւ եւ առաջնորդ հաստատեցի: Տվի իշխանութիւն ի վերայ ձեզ կապելոյ եւ արձակելոյ. կապեալն ի ձեզանէ կապի եւ արձակեալն արձակեալ եղիցի: Ով դմա հնազանդէ՝ սուրբ Էջմիածնայ եւ մեզ է հնազանդ, ով դորա հակառակ է՝ սբ Էջմիածնայ եւ մեզ է հակառակ. …Այլ Փաշիվանից իրիցանի հրամանք չունին, որ եպիսկոպոսական եւ Աթոռի հախ ուտէն. դոցա հախն իրիցութիւնէ, որ ուտեն՝ անտգնին լրբութիւն անեն կամ թէ Աթոռի հախն մերձենան՝ կարքէն լուծած լինին, որոշաց ի փառաց Որդուոյ Աստուծոյ. ամէն: Փաշիվանքն իւր թէմովն եմ տվել էլ Հաղպատուէ»[1] :

Կոնդակի հաղորդած տեղեկությունները վերլուծելու, դրանում արծարծվող հարցերն առավել բազմակողմանի ուսումնասիրելու համար անհրաժեշտ է նաև հասկանալ, թե պատմական որ ժամանակաշրջանում և ում օրոք է այն արձակվել:

Ըստ Պ. Մուրադյանի՝ Բարսեղ կաթողիկոսի (1105-1113 թթ.)[2] անունը կոնդակում շփոթության արդյունք է, ըստ նրա՝ թե՛ Փաշիվանքի (ավարտվել է 1432-ից առաջ) հիշատակությունը, թե՛ Տեր Բարսեղ եպիսկոպոսի հիշատակությունը թույլ են տալիս կաթողիկոսին չնույնացնել Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսի հետ (1105-1113 թթ.)[3]: Համաձայնենք, որ կոնդակում հիշատակվող Բարսեղ կաթողիկոսը չի կարող նույնացվել 11-րդ դարում գործած Բարսեղ Անեցի կաթողիկոսի հետ: Այս հարցի վերաբերյալ որոշակի լույս է սփռում Առաքել Դավրիժեցին, ով Ստեփանոս Սալամաստեցի (1545-1567թթ.) կաթողիկոսի կողքին միաժամանակ հիշատակում է Բարսեղ և Գրիգոր կաթողիկոսներին[4]: Տեր Բարսեղը և Տեր Գրիգորը հիշատակվում են նաև Սիմեոն Երևանցու կողմից տրված կաթողիկոսների ցանկում[5]: Հարցը քննության է առնվել նաև Մ. Օրմա-

---

[1] Նույն տեղում, էջ 82-83: Պ. Մուրադյանի կողմից գրի առնված կոնդակը համեմատել էնք Սանահնի Քյոթուկի երկու տարբերակներում տեղ գտած օրինակների հետ, տե՛ս Մատենադարանի ձեռ. Հմր 3031, 90ա-2բ, Հմր 8150, էջ 43-44:

[2] **Յակոբեան Ա.,** Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ դար (պատմա-աղբիւրագիտական քննութիւն), ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, Երեւան, 2020, էջ 285, 288, 291:

[3] **Մուրադյան Պ.,** «Քյոթուկ», էջ 82-83:

[4] Պատմութիւն **Առաքել Վարդապետի Դաւրիժեցւոյ,** Վաղարշապատ, 1898, էջ 438:

[5] **Սիմեոն կաթողիկոս Երևանցի,** Ջամբռ, Երևան, 2003, էջ 29:

նյանի կողմից, ով արդարացիորեն Տեր Բարսեղ և Տեր Գիրիգոր կաթողիկոսներին համարում է Ստեփանոս և Միքայել կաթողիկոսների աթոռակիցներ[1]: Ըստ այդմ Առաքել Դավրիժեցու կողմից՝ 1557 թ. Բարսեղ աթոռակից կաթողիկոսի հիշատակումը անհիմն է դարձնում այն պնդումը, թե կոնդակում նշվող Բարսեղ կաթողիկոսի անունը շփոթության արդյունք է[2]: Հետևաբար, կարելի է պնդել, որ կոնդակում հիշատակվող Բարսեղ կաթողիկոսը նույնական է 1557 թ. Բարսեղ աթոռակից կաթողիկոսի հետ:

Անդրադառնալով կոնդակում հիշատակվող Բարսեղ եպիսկոպոսին՝ Պ. Մուրադյանը նրան նույնացնում է Սանահինի առաջնորդ Բարսեղ Արղութեանցի (1464-1514 թթ.)[3] հետ, սակայն այս միտքը հակասական է դառնում, երբ դիմում ենք հարակից աղբյուրների օգնությանը:

Այսպես հայ հոգևոր մշակութային գործիչ Ստեփանոս Ռոշքան հայտնում է, որ 1496 թ.-ից մինչև 1515 թ. Վրաստանում հայկական թեմի առաջնորդ է եղել Սարգիս եպիսկոպոսը, ով հետագայում Սարգիս Դ Վրաստանցի անունով 1520-1536 թթ. կարգվել է Ամենայն հայոց կաթողիկոս[4]: Եթե ընդունենք Պ. Մուրադյանի կարծիքը և Բարսեղ արքեպիսկոպոսին նույնացնենք 1475-1514 թթ. գործունեություն ծավալած Բարսեղ արքեպիսկոպոսի հետ, ապա կստացվի, որ Սարգիս Վրաստանցու հետ միաժամանակ Վրաստանում հայկական թեմի առաջնորդ է եղել Բարսեղ արքեպիսկոպոսը: Սակայն այս պարագայում դա հնարավոր չէր, քանի որ կոնդակում հստակորեն նշվում է, որ Փաշիվանքը իր ամբողջ թեմով տրվում է Սանահինի տնօրինությանը՝ Բարսեղ արքեպիսկոպոսի առաջնորդությամբ: Հնարավոր չէ նաև 1464-1514 թթ. գործունեություն ծավալած Բարսեղ եպիսկոպոսի և 1557 թ. աթոռակից կաթողիկոս Բարսեղ կաթողիկոսի միաժամանակյա գործունեությունը:

Ուշագրավ է, որ Կ. Ղաֆադարյանի՝ Սանահինի առաջնորդների ցանկում Բարսեղ եպիսկոպոսին (1464-1514 թթ.) հաջորդում է Ղուկաս

---

1 **Օրմանյան Մ.,** նշվ. աշխ.,այուն 399:

2 **Մուրադյան Պ.,** «Քյոթուկ», էջ 41:

3 **Ղաֆադարյան Կ.,** Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 136, տե՛ս նաև գ. ցագոՇՈՇ, ნ. ՀանՇՈՎՇ, ՄՈՆՈՓՈՀՈՏՈՐՈ ՇՈՎՇՈՎՇ საქართველოში,თბილისი , 2009, გვ. 31.

4 **Ռոշքայ,** Ժամանակագրութիւն կամ Տարեկանք եկեղեցականք, Հրատարակեց **Համազասպ Հ. Ոսկեան,** Վիեննա, 1964 (Հայկական մատենաշար Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան), էջ 161:

եպիսկոպոսը (1514-1534 թթ.), որից հետո հիշատակվում է միանգամից Սարգիս արքեպիսկոպոս Արղութեանցը (1646-1681 թթ.)[1]: Նմանատիպ պատկեր է նաև Հ. Ոսկյանի մոտ[2]: Խնդրո առարկա հարցի վերաբերյալ լույս են սփռում «Քյոթուկում» պահպանված 1556 թ., 1576 թ., 1570 թ., 1577 թ. կաթողիկոսական կոնդակները, որտեղ Սանահինի առաջնորդ է հիշատակվում Բարսեղ անունով արքեպիսկոպոսը:

Այսպես, 1556 թվականին՝ Ստեփանոս (1545-1567) և Միքայել (1567-1576) կաթողիկոսների[3] կողմից արձակված կոնդակում հիշատակվում է. «Եւ ընդ աւրհնութիւնս ծանուցումն լիցի ձեզ, հոգեւոր որդիքդ մեր յՈձուն, Ամաւճ, Հակու, Ծոբրդայ, Կատաւէթ, Տալաւէր, Մամխուտն եւ Շուլաւէր, Վերի գեղն - ձեր ամեն գեղի բոլաւրէանքովդ տվինք Սանահնու սուրբ Աստուածածնին, որ ձեր ամէն հասք ու իրաւունք, ձեր անթերի պտուղն, սրբայդրամն, անկարծամահին հոգոյ բաժին տվէք Տէր Բարսեղ արհեպիսկոպոսին, որ դայ տանի ի դուռն Սուրբ Աստուածածնին...»[4]: Նույնական հիշատակություններ հանդիպում ենք 1576 թ., 1570 թ., 1577 թ. կաթողիկոսական կոնդակներում[5]: 16-րդ դարի կաթողիկոսական կոնդակներում Բարսեղ արքեպիսկոպոսին՝ որպես Սանահինի առաջնորդ հիշատակումը թույլ է տալիս պնդել, որ 1534 թվականից (Ղուկաս եպիսկոպոսից հետո) մինչև 1580-ական թվականները Սանահինում գործել է Բարսեղ անունով ևս մեկ արքեպիսկոպոս: Հետևաբար, հակված ենք կարծելու, որ կոնդակում հիշատակվող Բարսեղ արքեպիսկոպոսը՝ նույն ինքը 1534-1580-ական թթ. գործող և աթոռակից Բարսեղ կաթողիկոսի ժամանակակից Սանահինի Բարսեղ արքեպիսկոպոսն է: Ուշագրավ է, որ հենց վերջինիս մասին է հիշատակված Մառնեուլի շրջանի Օփրեթի գյուղում գտնվող Սբ. Աստուածածին եկեղեցու հայերեն արձանագրության մեջ. «Թագաւորքն վրաց Բագրատունիք տվեալ են ի վախմ Սան[..]ահնու Ս(ու)րբ Ա[ստուա]ծածնին գի[..]ղս. առաջնորդութ(եամբ) [Բա]րսեղ եպ(իսկոպո)ս [..] եւ Սարգիս եպ(իսկոպո)ս շինեցի զե[կեղ]եցի [...] թե Ս[ուր]բ Ա(ստուա)ծածնին

---

1 **Ղաֆադարյան Կ.,** Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 195:

2 **Ոսկյան Հ.,** նշվ. աշխ., էջ 129-130:

3 **Օրմանյան Մ.,** սյուն 400:

4 **Մուրադյան Պ.,** «Քյոթուկ», նշվ.աշխ., էջ 84:

5 Նույն տեղում, էջ 85-88:

ց[……] թ(ի)վ ՌՁԷ»[1]: Ըստ արձանագրության՝ Բարսեղ եպիսկոպոսի օրոք Օփրեթի գյուղը նվիրվել է Սանահինին, իսկ Բարսեղ եպիսկոպոսին հաջորդող Սարգիս եպիսկոպոսի կողմից տեղում կառուցվել է եկեղեցի:

Ընդհանուր առմամբ, վերոնշյալ Բարսեղ կաթողիկոսի անունը կրող կոնդակից պարզ է, որ Տփղիսի եպիսկոպոսանիստ Փաշիվանքի տաճարը և թեմը յուր վիճակի մի մասով անցել էին Սանահինի իրավասության տակ: Կոնդակից իմանում ենք նաև, որ Սանահինին էր հանձնվում Վրաստանում հայկական թեմի ենթակայության տակ գտնվող Քարթլիի ու Կախեթի գյուղերում՝ Թելեթի, Կումիս, Տագնայ, Վաշլեվան, Լիսի, Դապախմելա, Դիղոմի, Վարդիսուպան, Կիկեթի, հաստատված հայկական համայնքների եկեղեցիները[2]:

Հարկ է նշել, որ այս ամենն ուներ իր նախադրյալները: Նախևառաջ դա սերտ կապված էր նաև Էջմիածնի կաթողիկոսարանի՝ Սանահինի նկատմամբ բարեխնամ վերաբերմունքի հետ: Նույնական վերաբերմունք չէր դրսևորվում Հաղբատի նկատմամբ, որ դեռևս 12-րդ դարից Վրաց թագավորների հովանու ներքո էր[3]: Ուշագրավ է, որ Հաղբատի վանքում պահպանված արձանագրություններից մեկից իմանում ենք, որ 12-րդ դարում Հաղբատի վանքի առաջնորդական վիճակը վերականգնվում է Գեորգի III (1156-1184 թթ.) թագավորի կողմից[4]: Վրաց թագավորների այս քաղաքականությունը շարունակվում է նաև հետագայում, այսպես Հերակլ II (Կախեթի (1744 թ.-ից), ապա՝ Քարթլի-Կախեթի (1762 թ.-ից)) բոլոր միջոցներով նպաստում էր Հաղբատի թեմի ընդարձակմանը՝ ի հաշիվ Սանահինի[5]: Էջմիածնի կաթողիկոսները մշտապես գիտակցում էին, որ Վրաստանում ապրող հայերին և նրանց հոտը Հաղբատի վիճակի մեջ ներառելու վրաց իշխանությունների ձգտումը պառակտում էր առաջացնելու վրաստանաբնակ հայության և Սբ. Էջմիածնի միջև: Հաղբատի անկախացումը Էջմիածնից թույլ կտար վրաց հոգևոր և աշխարհիկ իշխանություններին ամբողջովին իրենց ձեռքում կենտրո-

---

[1] გაგოშიძე გ., ჩანთლაძე ნ., დასახ ნაშრომი, გვ. 113:

[2] Նույն տեղում, էջ 82:

[3] **Մելիքյան Լ.,** նշվ. աշխ., էջ 40-48:

[4] **Ղաֆադարյան Կ.,** Հաղբատ, էջ 143:

[5] **Զոբանյան Պ.,** Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006, էջ 61:

նացնել վրաստանաբնակ հայերի աշխարհիկ և հոգևոր կյանքը:

Հաճախ վրաց իշխանությունների այս քաղաքականությունը հանգեցնում էր ներեկեղեցական հակամարտությունների՝ Սբ. Էջմիածնի և Հաղբատի վանքերի միջև: Մեր կողմից քննարկվող «Բարսեղ կաթողիկոսի» անունը կոնդակում ևս հանդիպում են ակնհայտ հակասություններ Էջմիածնի կաթողիկոսարանի և Հաղբատի միջև: Կոնդակի վերջում նշվում է, որ Փաշիվանքի երեցները իրավունք չունեն «աթոռի հախ ուտէն» կամ «լրբութիւն անեն»[1]: Դրան հաջորդող նախադասությունը թույլ է տալիս հասկանալու երեցների այդչափ դժգոհությունը: Այստեղ կաթողիկոսը հերքում է, որ Փաշիվանքը իր թեմով եղել է Հաղբատի թեմի տեսչության ներքո, ինչն էլ, ամենայն հավանականությամբ, առաջացրել էր Փաշիվանքի երեցների դժգոհությունը: Կարծում ենք՝ հավանականությունը մեծ է, որ թեմը եղել է Հաղբատի թեմի առաջնորդության ներքո՝ նամանավանդ հաշվի առնելով վանքի եկեղեցականների վիճատությունը և վերոնշյալ հարակից աղբյուրները:

Եզրակացություն

Այսպիսով՝ հետազոտելով Վրաստանում հայկական թեմի պատմությանը վերաբերող առանցքային հարցեր՝ նշենք մի քանի կարևոր հարցադրումներ: XII-XIV դարերի ընթացքում Վրաստանում հայ առաքելական թեմը գործել է Հաղբատի թեմի առաջնորդության և տեսչության ներքո: Էջմիածնի կաթողիկոսական աթոռը Հայաստան տեղափոխվելուց հետո Վրաստանում հայ առաքելական թեմի սահմաններում ընգրկված վիճակը պարբերաբար բաժանվում էր Սանահինի և Հաղբատի եպիսկոպոսությունների միջև: Երկու եպիսկոպոսություններն էլ գործում էին Սբ. Էջմիածնի գերագահության ներքո, սակայն Հաղբատի թեմը գտնվում էր վրաց թագավորների հովանու և ազդեցության տակ: Իր հերթին՝ Սբ. Էջմիածինը Վրաստանում հայկական թեմի վիճակի մեծ մասը ընգրկում է Սանահինի թեմի վիճակի մեջ՝ ավելի դյուրացնելով իր ազդեցությունը և վերահսկողությունը վրաստանաբնակ հայերի և հայկական թեմի վրա:

---

[1] Մատենադարանի ձեռ. Հմր 8150, 43-44:

Բանալի բառեր՝ *թեմ, արքեպիսկոպս, Հովհաննես, Ղուկաս, Բարսեղ, Սանահին, Հաղբատ, Սբ. Էջմիածին:*

ОДИН ЭПИЗОД ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ ЕПАРХИИ В ГРУЗИИ В 14-15 ВВ.

Лилит Меликян

Ключевые слова: *епархия, архиепископ, Ованес, Лука, Барсег, Санаин, Ахпат, Св. Эчмиадзин.*

Статья посвящена анализу внутреннего устройства Армянской епархии в Грузии и ее внешних связей. Автор предпринял попытку выявить неизвестных до этого времени в научной литературе епархиальных архиерей и особенности деятельности епархии во время их руководства. Работа касается также отношений Армянской епархии и Св. Эчмиадзина, в том числе Санаинской и Ахпатской епархий. Особое внимание в статье уделяется анализу декларируемых и реальных целей и стремлений Св. Эчмиадзина и грузинских царей в отношении Армянской епархии в Грузии.

AN EPISODE FROM THE HISTORY OF THE ARMENIAN DIOCESE IN GEORGIA IN THE 14TH-15TH CENTURIES

Lilit Meliqyan

Keywords: *diocese, archbishop, Hovhannes, Luke, Barsegh, Sanahin, Hagbat, St. Etchmiadzin.*

The article is dedicated to the coverage of the internal life and external relations of the Armenian Diocese in Georgia. In the article, an attempt was made to clarify the diocesan bishops, unknown to the public before, and diocese activity under their rule. The article touches upon the relationships between the Armenian Diocese and St. Etchmiadzin, as well as Sanahin and Haghpat dioceses. It also represents goals and aspirations of Georgian kings and St. Etchmiadzin towards the Armenian Diocese of Georgia.

Լիլիթ Մելիքյան *– ԵՊՀ Պատմության ֆակուլտետի դասախոս*

Лилит Меликян *– преподаватель Факультета истории ЕГУ*

Lilit Meliqyan *- lecturer at the YSU Faculty of History*